ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2
24.08.2020թ. կնքված N ՋԿ–ՀԲՄԱՇՁԲ-20/4-Ա ծածկագրով
կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրի

ք. Երևան «25» փետրվարի 2021թ.

Ջրային կոմիտեն, ի դեմս Կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները ժամանակավոր կատարող Ա. Մարգարյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ժիլյո» Ա/Կ-ն, ի դեմս նախագահ Ս. Ավագյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, հիմք ընդունելով 24.08.2020թ. կնքված N ՋԿ–ՀԲՄԱՇՁԲ-20/4-Ա ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.6 կետերը և հաշվի առնելով «Ժիլյո» Ա/Կ-ն 11.02.2021թ. առաջարկությունը, ինչպես նաև 12.02.2021թ. մասնագիտական խմբի արձանագրությունը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 ՋԿ–ՀԲՄԱՇՁԲ-20/4-Ա ծածկագրով գնման պայմանագրի աշխատանքների կատարման սահմանված ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով, այն է՝ Պայմանագրի 1.3 կետի և Հավելված թիվ 2-ի «5 ամիս» բառերը փոխարինել «6 ամիս» բառերով և աշխատանքների կատարման վերջնաժամկետ սահմանել 25.03.2021թ.:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման և կնքման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը: Համաձայնագրի գործողությունը տարածվում է կողմերի՝ մինչև համաձայնագրի կնքումը փաստացի ծագած հարաբերությունների վրա, ինչպես նաև գործում է մինչև կողմերի կողմից սույն համաձայնագրով և Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է համաձայնագրի մեկ օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Ջրային կոմիտե	«Ժիլյո» Ա/Կ
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա	ք. Երևան, Բագրատունյաց 69
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	հեռ. 091 400758
Հ/Հ 900011567386	Էլ հասցե՝ serzhik-avagyan@rambler.ru
ՀՎՀՀ 02555816	Հ/Հ 115004610859
Կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները ժամանակավոր կատարող	ՀՎՀՀ 02205353
	նախագահ
_____ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ	_____ Ս. ԱՎԱԳՅԱՆ
(ստորագրություն)	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ